

ԴԵՐՍԻՄ

(Պատմաագագրական ակնարկ)*

Ն. Ն. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Դերսիմի լեռնաշխարհը, որ այժմ կոչվում է Տունջելի, գտնվում է Հայ-
կական Տավրոսի արևմտյան ճյուղի շրջանում: Այն պատմական Հայաստանի
Ծոփաց աշխարհն է (ըստ Ղ. Ալիշանի՝ Փոքր Ծոփք կամ Ծոփք Շահունյաց¹)
և տարածվում է հին Դարանաղի դավառից (Երիզս կամ Երզնկա) հարավ և
Քղիից (Խորձյան գավառ) արևմուտք՝ արևելյան երկայնության $38^{\circ}45'$ —
 $39^{\circ}45'$ -ի և հյուսիսային լայնության 39° — $39^{\circ}45'$ -ի միջև²: Դերսիմի բարձրա-
վանդակը զբաղեցնում է 8—10 հազ. քառ. կմ տարածություն³: Գլխավոր քա-
ղաքներն են. կենտրոնում՝ Խոզաթ (նախկին Խոզնա Լրկիր), հարավային սահ-
մանում՝ Չմշկաձագ, արևելյան սահմանագլխում՝ Մեծկերտ կամ Մազկերտ,
հյուսիսային կողմում՝ Օվաճուղ, հարավ-արևելքում՝ Փերի:

Բնակչությունը.— Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Դեր-
սիմի բնակչությունը բաղկացած էր քրդերից, թուրքերից և հայերից, որոնք,
յուրաքանչյուրն իր տոհմի կամ գերդաստանի անդամներով, ապրում էին
8—15 (մի քանիսն էլ՝ 20—35) տներից բաղկացած 150—160 գյուղակներում:
Եթե հաշվենք 155 գյուղ՝ 14-ական տնտեսությամբ և յուրաքանչյուր տնտե-
սությունն էլ 8 շնչից, ապա ներքին Դերսիմի բնակչությունը կկազմի 17360
շունչ: Ամբողջ Դերսիմի բնակչությունը, քաղաքներով միասին, 1915 թ. եղել է
50 հազարից քիչ ավելի⁴:

* Ն. Գասպարյանը, որ բնիկ դերսիմցի է, ներկա ակնարկում լայնորեն օգտագործել է
իր հուշերն ու անձնական դիտումները (հմբ.):

1 Ղ. Ալիշան, Հայրունի, Վենետիկ, 1865, էջ 231: «Տեղեկանք Հայոց Մեծաց», Վենե-
տիկ, 1865, էջ 12, 253:

2 «Աշխարհի ատլաս», Մոսկվա, տե՛ս Թուրքիայի քարտեզը: «Դերսիմի քարտեզը», ընդ-
օրինակված անգլիական սպայակույտի (շտաբ) աշխարհագրական բաժնի կողմից 1916 թ.
գծված № 2555 քարտեզից, տե՛ս «Պատմագիրք Չմշկաձագի» զրբում (Բելյուս, 1971, էջ 24—25):

3 Գևորգ Հալաջյանը (Թափառական) ցույց է տալիս գրեթե կրկնակին, Դերսիմին միացնե-
լով Կեմախի, Երզնկայի, Քղիի շրջաններից որոշ մասեր և նրա հարավ-արևմուտքին միացնելով
Տիգրանակերտի նահանգի հյուսիս-արևմտյան մասը (տե՛ս Գ. Հալաջյան, Տերսիմի հա-
յերի ազգագրությունը, Ա մաս, «Հայ ազգագրական բանասիրություն», պրակ 5, Երևան, 1973):

4 Կապիտան Սելը իր պաշտոնական տեղեկագրի մեջ գրել է 65 հազար (տե՛ս «Պատմա-
գիրք Չմշկաձագի», էջ 19): Գ. Հալաջյանը Դերսիմի միայն հայ ու քուրդ բնակչության թիվը
հասցնում է 289568 շնչի. եթե այս թվից հանենք Դերսիմի մաս չկազմող Բալուխ շրջանի 51007
շունչը, կունենանք 238361 շունչ, որից հայեր՝ 88414 շունչ, իսկ քրդեր՝ 149947. սա մոտ քառա-
պատիկ ավելացրած երևակայական թիվ է: Օրինակ, Չմշկաձագ քաղաքը, որ ծննդավայրս է,
1915 թ. ուներ 3618 շունչ հայ, թուրք ու քուրդ խառը բնակչություն, թուրքերի մեծամասնու-
թյամբ (Ն. Ն. Գասպարյան, Չմշկաձագ և իր գյուղերը, «Պայքար» տպարան, 1969,
էջ 92-ի աղյուսակը), իսկ Գ. Հալաջյանը գրել է 5400 միայն հայ ու քուրդ բնակչություն:

Դեռևս XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարի սկզբներին Դերսիմն ունեցել է հայկական նստակյաց հոծ բնակչություն, նրա բուրդ բնակչությունը, ըստ Զ. Գ. Թեյլորի, բաղկացած էր բնիկներից և եկվորներից: Այդ էին վկայում նաև ստիպողաբար բաղաբները դաղթած հայերը, որոնց պատմելով XVIII դարի կեսերից եկվոր քրդերը թափանցել են Դերսիմ և, ըստ երևույթին կառավարության դրամամբ, աստիճանաբար զավթել են հայերի պապենական և վանքապատկան հողերը, իսկ հայերին արտաքսելուց հետո էլ սկսել են տիրել տեղացի քրդերի հողերին, որն առյուծալի կռիվների տեղիք է տվել և շարունակվել մինչև առաջին համաշխարհային պատերազմը:

Բնիկ քրդերը կամ հին դերսիմցիներն ընդհանուր առմամբ կոչվում էին Սեիդանի Դերսիման, իսկ եկվորները, ըստ Թեյլորի, կոչվում էին Սեիդ-Հասանանցիներ, ըստ Լ. Լյուկեճյանի՝ Շեյխ-Հասանանցիներ: Թեյլորի տվյալների համաձայն վերջիններիս «նախնիքը դաղթել են Պարսկաստանի իտրասան բաղաբից, նախ տեղավորվելով Մալաթիայի մոտերքը գտնվող Աղջադաղի խարաբել վայրում, այնուհետև տեղափոխվել են Դերսիմ (գուցե այս պատճառով էլ եկվորների մի մասը կոչվում էր «խարաբալի»): Բուն դերսիմցիները, — շարունակում է Թեյլորը, — սլացիկ, սև մազերով, սև աչքերով, երկար դեմքով ու երեսի թխորակ գույնով են, մինչդեռ եկվորները՝ Սեիդ-Հասանանցիները (Շեյխ-Հասանանցիները), ավելի կարճ են, ունեն կլոր ու գեղեցիկ դեմք, մյուսների նման սև մազեր, սևորակ աչքեր ու խիտ մորուք»⁵:

Դերսիմի շատ քրդաբնակ գյուղեր (հատկապես եկվոր քրդերի), թեև աղավաղված, պահում էին իրենց հայկական անունները: Դրանցից էին, օրինակ, Աղաջուր, Գնեի, Սրբիյան (Սուրբ Օհան), Արտապետ, Շիկոմ, Ահրիման, Պսկա վանք, Հովեկ, Թորոս Գոմ, Նդրիվան, Սաղման, Պատուկ, Երկան Ընկուզիկ, Խնձորի, Փիրվանք, Պառվազրակ, Ազրակ, Դաշտակ, Օհանա, Ակնիկ, Թանկ, Աղբաձոր, Բարդի, Գոմեր, Լորենիկ, Աղզունիկ կամ Աղձունիք, Լերդիկ, Կծու, Խաչելի, Խաչուուն, Սիրազ, Բեղաղուտ, Թաներ, Համբասման (Համբարձման), Հասութ, Ախոռներ, Հալպատ, Վարի գեղ, Կարմիր քար, Դանել, Զմայես, Թթենիկ, Պառավ, Ամութխա, Պաաստիկ, Սագատիկ, Կալվերիկ, Աղվես գեղ, Բսակ և այլն:

Թեյլորը նշում է, որ հայ բնակչությունը խոսում էր ոչ մաքուր հայերենով: Լինճըղկա գյուղում 1866 թ., երբ Թեյլորը այցելել է այնտեղ, եղել են 40 տնտեսություն բուրդ և 40 տնտեսություն հայ, սակայն 40 տարի անց մնացել են շորս տուն հայ, որոնք իրենց մայրենի լեզուն շատ վատ դիտեին և գործածում էին քրդերից գաղտնի խոսելիս: Քրդերից նրանք տարբերվում էին միայն իրենց անուն-ազգանուններով և կրոնական սովորություններով, իսկ կանայք՝ նաև տարազով: Ըստ տեղեկությունների, Խաչք, Աղաչանուն, Կըրպո, Հանդ, Մամկուն և Սավա գյուղերի բնակիչները քրդացած հայեր էին⁶:

Դերսիմի 2 խոշոր ցեղախմբերից Շեյխ-Հասանանցիները բաժանված էին հետևյալ տոհմերի.

1. Խարաբալի կամ խարաբելի. սրանցից էլ՝ ֆերհատան կամ ֆերհատուշաղի մեծ տոհմը, որ զբաղեցնում էր Դերսիմի հարավ-արևելքում ընկած

⁵ J. G. Taylor, Journey of a Tour in Armenia Kurdistan and upper Mesopotamia in the Notes of Resarched in Dersim-Dagh in 1866. „Journal of the Royal Geography Society“, vol. 38, London, 1868, էջ 280—360, 319—327.

⁶ Դ. Հալաբյան, նշվ. աշխ.

Աղբակ, Գալանդուղ, Գողտնվանք, Ագրակ, Դաշտակ, Խաշտուն, Դարնոսի և Խարտիշար գյուղերը:

2. Շամ-ուշաղի. բնակվում էին հարավ-արևմտյան մասում, ընդհուպ մինչև Արածանիի ստորին հոսանքի Գոմոեշ, Աղկի, Աղլոզ, Հաստեկ և Քուրդ Աշգանի գյուղերը:

3. Շավախի. բավական մեծ տոհմ էր, որ զբաղեցնում էր Զմշկածագի և Բերդակի միջև ընկած Խթենիկ, Պառավ, Տերիդըրեթ, Գոմեր, Լորենիկ, Հայ Աշգանի գյուղերը: Գլխավորապես զբաղվում էին անասնապահությամբ, իրենց մեծ հոտերով ամռանը բարձրանալով Բյուրակնյան լեռները: Արտածում էին յուղ, պանիր և մսատու անասուն:

4. Յուսուֆանի. համեմատաբար փոքր տոհմ էր, դավանանքով՝ շիի: Բնակվում էր Մեծկերտից (Մաղկերտ) արևմուտք, Աղդադ և Բակեր գյուղերում:

5. Գալանի կամ գեյլանի. այս տոհմը զբաղեցնում էր Դերսիմի հարավ-արևելյան մասը: Դավանանքով սրանք եղիդիի և ալևիի խառնուրդ էին: Հասանանցիների մեծ շեյխը Ժառանգաբար այս ցեղից էր լինում և մեծ հեղինակություն ուներ ամբողջ Դերսիմում:

6. Փիլվանի կամ փիրվանի. սրանք ալևիի հին զաղթողներն էին և զբաղեցնում էին Խոզատի շրջանի Գորավիր, Զեմզելի, Երնտիկ, Կարամեշե, Վերին Աղզունիկ և Բասևան գյուղերը, ափրկելով նաև Փիրվանք վանքի հողերի մի մասին. խոսում էին կուրմանջի լեզվով:

Բնիկ դերսիմցիները կամ սեփդանիները կազմված էին հետևյալ ցեղերից.

1. Խոջանի. ամենամեծ և իշխող ցեղն էր, որը բռնում էր բուն Դերսիմի տարածության գրեթե կեսը՝ Ամոթխա և Արճաբերդ կենտրոններով և Ազգաձոր, Ռալկա, Գանկրոզ, Գենկեռի, Գնելի, Դալքո, Թաղար, Լերդիկ և այլ գյուղերով: Այս ցեղից բաժանվել էին Խրդանի և վերին ու ներքին Աբասանի տոհմերը, որոնցից առաջինը բնակվում էր Արճաբերդ, Ազգաձոր և Գանի գյուղերում, երկրորդը՝ արևելքում՝ Տղդադո կենտրոնով, իսկ երրորդը՝ հարավ-արևելքում՝ Աղզունիկ, Ընձըղկա, Սուրբիան, Հավշաբար, Փեյիկ գյուղերում: Աղզունիկում 1915 թ. եղել է 15 տուն ալևի (յուլբաշ) քրդեր և 5 տուն հայեր, իսկ Երկան Ընկուղիկում՝ 25 տուն քուրդ և 8 տուն հայ⁷:

2. Լաչինի. բնակվում էին Դերսիմի կենտրոնական մասում:

3. Գարիկի. ըստ իրենց ավանդության, Գարեգինի որդիք: Զբաղեցնում էին Դերսիմի կենտրոնական մասից հյուսիս ընկած տարածությունը և Հավլորի շրջանն ու Տուժիկի ներքին մասը, որ ամենաանառիկ վայրն էր: Ժառանգաբար այս ցեղից պետք է լինեին բուն դերսիմցիների գլխավոր սեփղը, որը միակ իրավապետ անձն էր միջցեղային կռիվները կասեցնելու և հաշտեցնելու մամուսակ:

4. Գևանի կամ Գևո-ուշաղի. իրենց ենթադրությամբ Գևորդի որդիք: Բնակվում էին Մնձուրից հարավ, Օվաջուղի հարթավայրում:

5. Կուռե-շահնի (Շահինի որդիք). բնակվում էին Դերսիմի հյուսիս-արևելյան մասում և Գութուդերեի շրջանում:

6. Ռըշկանի, որսկանի կամ ռեսկ-ուշաղի (ռեսի որդիք). բնակվում էին

7 Լ. Կ. Լյուլևճյան, Տերսիմ, «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, Տ սեպտեմբերի, 1943:

արևելյան և հյուսիս-արևելյան Դերսիմում, Կուռե-Շահնցիների հետ խառը: Հետևում էին քարթվանյան կիսաեղիղական աղանդին:

7. Մամկի. ապրում էին Մշս, Քրդիի և Դերսիմի սահմանապլիսին: Բավական ուժեղ տոհմ էր, պահպանում էր քրիստոնեական և հեթանոսական շատ ավանդույթներ:

Կային նաև հետևյալ տոհմերը, որոնց ծագումը, հավանաբար, քրդական էր.

ա. Հալտարանցիք. բնակվում էին Մեծկերտի և Ղըղըլքիլիսի շրջանում:

բ. Բախտիաբի. ապրում էին Մնձուր լեռան փեշերին ցրված Բագրատ, Գասման (մեծ ու փոքր՝ միասին 20 տնտ.), Գըղըլմեղրե, Գըղըլղոմ, Գըղըլղաղ գյուղերում:

գ. Ալանի. բնակվում էին Մնձուր գետի ստորին հոսանքի ձախ ափին, Փոքր տոհմ էր:

դ. Սուրանի. բնակվում էին Դերսիմի հարավ-արևելյան ծայրամասում:

ե. Սըրվանի. ապրում էին Փերիի և Ղըղըլքիլիսի միջև:

Մինչև XIX դարի վերջը Դերսիմում բնակվում էր նաև Միրագյանների հայ իշխանական տոհմը, որի սեփականությունն են եղել Հալվոր, Պառվազրակ և Միրագ գյուղերն իրենց շրջակայքով: Սրանք հաճախակի կռիվներ են մղել եկվորների հետ՝ իրենց սեփականությունն ու կյանքը պաշտպանելու համար:

Ընչպես երևում է տեղանուններից, եկեղեցիների ավերակներից և այլ բաղադրան հայկական հուշարձաններից, Դերսիմի բարձրավանդակում մի ժամանակ զերակշռելիս են եղել հայերը: Սակայն օսմանյան կառավարությունը ամեն կերպ ձգտել է իսլամացնել կամ ցրել անառիկ այդ վայրում համախմբված հայ զանգվածը, ոչնչացնելով նաև նրանց հողերը զանձերը: Այս կապակցությամբ էլ կառավարությանը ձեռնադրել էր Շեյխ-Հասանանցիների կամ խարաբալիների մոտքը Դերսիմ, որոնք տիրանում էին հայկական հողերին ու գյուղերին, հատկապես վանքապատկան հողերին, ցրում վանական միաբանությունները: Այսպես, Չմշկածաղի Աղարակ գյուղին, որը հայ գրչության օջախներից մեկն՝ Ս. Նշան Կարմիր Վանքի սեփականությունն էր, վերջնականապես տիրել էր Ֆերատանի տոհմապետ Դիաբը: Այստեղից Չմշկածաղ էին գաղթել հոփկյան, Հովսեփյան, Մելիքյան, Մալխասյան, Մեծիկյան և այլ ընտանիքները, այնպես որ 1915 թ. հազիվ 8 տուն հայ էր մնացել այդ գյուղում: Դեռևս 1800-ական թթ. և դրանից էլ առաջ նույն գյուղից Չմշկածաղ էին գաղթել Անմահյան (էթմեթյան), Դավթյան և Գասպարյան (իմ գերդաստանի) ընտանիքների պապերը: Միաժամանակ խարտիշարից, Սուրբիանից և այլ գյուղերից բավական թվով հայ ընտանիքներ ցրվել էին դաշտային հայ գյուղերում:

Եկվոր քրդերի տիրապետության դեմ պրավված գյուղերի հայ բնակչության կողմից անընդհատ բողոքներ էին դրվում կառավարությանը, իրենց պապենական հողերն ապօրինաբար զավթվելու կապակցությամբ, սակայն տեղական կառավարությունը չլսելու էր տալիս կամ պործը հանձնում էր մի որևէ ատյանի «բնություն», որը, ըստ հրահանգի, քննեցնում կամ տարիներ ձգձղելուց հետո անհետևանք էր թողնում⁸, Պատահում էր, որ պործը փոխադրվում

⁸ Տե՛ս Գ. Երևանյան, Զարսանձագ, Բեյրութ, 1956, էջ 279—293 և 312—392:

էր նահանգային դատարան, և հայերը շահում էին իրենց դատը: Սակայն այս պարագայում գավառի կառավարության ղեկավարը հայտարարում էր, որ ինքը տվյալ հողամասը կամ գյուղը նվիրել է այսինչ բուրգ տոհմապետին:

Նման քաղաքականությամբ Օսմանյան կառավարությունը մի կողմից բրդերի միջոցով հայերին ունեղրկում էր, իսկ մյուս կողմից, բուրգ ցեղապետներին հայերի հաշվին նվերներ տալով ձգտում էր կանխել ապստամբության վտանգը:

Զբաղմունք և հողատիրություն.— Հողն ու անտառները (արտաքին, մասամբ էլ ներքին 'Դերսիմում') պատկանում էին ցեղապետներին կամ տոհմապետներին: Յուրաքանչյուր ցեղապետ գրավել էր մեկից ավելի գյուղեր, որոնցում տեղավորել էր իր շառավիղներին (սեպուհներին): մնացած ժողովուրդը, որ հողի մշակն էր, ծառայում էր սրանց որպես կիսնորդ կամ ճորտ և պահանջի դեպքում՝ կռվող ուժ: Շեյխ-Հասանանցիները (եկվորներ) գրավել էին նաև վանքապատկան հողերը: Օրինակ՝ Ֆերատանի տոհմի ազդու տոհմապետ 'Դիաբը գրավել էր ամբողջ Ագրակ գյուղը, զավթելով նաև Կարմիր Վանքի հողերի մեծ մասը (մոտ 200 հեկտար), իսկ գյուղի բնիկ 8 տուն հայերն էլ իրենց պապենական-սեփական հողը մշակելու համար 'Դիաբից թույլտվություն պետք է վերցնեին, բերքի մեկ հինգերորդը տալով հանդերձ: Բացի այդ, 'Դիաբը զավթել էր նաև իր սահմանից շատ հեռու, դաշտային մասում գտնվող հաշտուն հայաբնակ գյուղը, որի բնակիչների մի մասը ցրվել էր, մնացել էին 12 տնտեսություն, որոնք և՛ իրենց հողն էին մշակում, և՛ 'Դիաբի զավթածը: 'Դիաբի հորեղբայր խարաման աղան տիրել էր խարտիշար գյուղի և վանքի հողերի մեծ մասին և ժառանգ էր թողել իր որդիներին՝ Քիչիկին ու Մըշեին: Ընձըղկա գյուղը Երկան Ընկուզիկի հետ պատկանում էր Սեիդանիների Վերին Աբասան աշիրից: Զեյնո Զադե Մսդաֆային ու եղբայրներին: Կալվերիկ ու Փետրան սահմանակից գյուղերին տիրել էր Սուլեյման աղան (խոջանի): Գնելի գյուղի մի մասը Բեքոյինն էր, իսկ Քորմշկան գյուղը՝ երկու եղբայրներին (խոջանի): Ամուլթիան իր շրջապատով Սեիդ Իբրահիմին էր (խոջանի) պատկանում: Նա ամենաուժեղ ցեղապետն էր՝ Իդարա մականունով: Հավվորը, Միրադյանների ցրվելուց հետո, ամբողջությամբ պատկանում էր Սեիդ Բիգային: Գերիկի Դաշտակ գյուղը խոջոյինն էր (լաշինի), Թադարը և Օվաջուղից որոշ հողամաս՝ խշտիկ Ահմեդինը (խոջանի), Բեզադուտն ու Աղզունիկը Սեիդ և Ալի Կեկոններինն էին (Ֆերատանի) և այլն:

Արտաքին Դերսիմի հատկապես եկվոր բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն էր, բացի Շավախի ցեղից, որը բազմաթիվ հոտեր ուներ (սրանց մի մասն էլ 'Դերսիմի սահմաններից դուրս էր՝ Արածանիի ձախ ափին) և զբաղվում էր անասնապահությամբ: Կային խոպան հողակտորներ, որոնք գյուղացին կարող էր մշակելի դարձնել, բայց չէր մշակում գյուղապետի կամ տոհմապետի կողմից հափշտակվելու ահից: Հողի ընդերքում թաքնված գանձն անդամ գյուղապետին էր պատկանում. գտնողը պետք է լրիվ հանձներ նրան:

Գյուղացին կարող էր անասուն պահել ցանկացած քանակությամբ, իսկ անտառից կարող էր օգտվել միայն գյուղապետի, ցեղապետի թույլտվությամբ:

Ներքին դերսիմցիների հիմնական եկամուտն անասնապահությունից էր:

Այս մասում վարելահողը շատ քիչ էր՝ խիստ կտրտված ուղիների պատճառով։ Ձմեռը ցրտաշունչ ու երկարատև լինելու հետևանքով աշնանացան գրեթե չկար, իսկ դարձանագանը վաղահաս և բերքատու դեղին կորեկն էր, որոշ չափով՝ գարին և չնչին քանակով էլ ցորենը։ Գրաստներից գործածական էին էլն ու ջորին, որ քչերն ունեին։ Այստեղ էլ հողի մեծ մասը ցեղապետինն էր, բայց անտառները համայնական էին, որից օգտվում էին բոլորը։ Խոշոր եղջերավոր անասուն քիչ էին պահում, իսկ մանր եղջերավորից միայն այծ ունեին։

Սակայն, ինչպես նշել ենք, ներքին դերսիմցիների զբաղմունքներից մեկը ասպատակությունն ու ավարառությունն էր, որը կազմակերպում էին ցեղի ավագները։

Լեզուն կամ բարբառը.— Բուն դերսիմցիների (Սեդանիների), Շեյխ-Հասանանցիների և մեր իմացած քրդերենի՝ կուրմանձի լեզվի կամ բարբառի միջև որոշ տարբերություն կար։ Քրդական ցեղերը, բացի եզդիներից, իրենց «կուրմանձ» են անվանում։ Բնիկ և եկվոր քրդերի լեզվի մեջ կան Ձաղաքի և Տըմըլքի բարբառները։

Ստորև տալիս ենք Դերսիմի բնիկների, եկվորների և կուրմանձիների մի շարք բառերի համեմատական նմուշներ՝ որոշ գաղափար կազմելու համար Դերսիմի բնակչության լեզվի մասին։

Հայերեն	Դերսիմի Սեդանի	Շեյխ-Հասանանի	Կուրմանձի
Ականջ	գյառըկ	գուհ	գուհ
Աղբյուր	բուլախ, շեշմէ	կանի	կանի
Ամպ	դուման	ավր	ավր
Այծ	բըզի	բըզըն	բըզըն
Աստված	հախօ	խօդէ	խոադէ
Արև	առօ	ռօ	ռօ
Արյուն	դօն	խուն	խուն
Բաղուկ (թև)	բօզի	իիյ	մըլլ (Ուրֆ. փիյ)
Բեռ	բօշը	բէր	բար
Բուրդ	ռաշօ	հըրի	հըրի
Գայլ	վալթ	գուր	դուր
Գառ	գարակ	բաբխօ	բարխ
Գարի	ջալ	ջալ	ջալ
Դու	թօ	տու	տու
Եզ	կա	կօ	զա
Երկինք	հավէ	աղմէն	աղման
Զավակ	տօման	դա	դառ
Զարնել	փրոդէ	խսթըն	լէ-դան (Ուրֆ. լէ-խրսթըն)
Զենք	ճաթ	թֆանկ	ճաթ (Ուրֆ. սելահ)
Ընկնել	քավօ	քաթօ	քաթըն
Թաղիք	քաշա	կուլապ	կուլար (Ուրֆ. կուլավ)
Թան	դօ	դէու	դաու
Թիկունք	փուշտ	փուշտ	պըշտ
Լեռ	բօյ, սար	ճէէ	ճիյա
Լուսին	ոռստօ	հէվ	հիվ
Խաբել	խապնա	խափանըն	խապանըն

Խոսել	Խաղի-քիմա	Խըսէկըն	Խարարդան (Ուրֆ շօրկըրըն)
Խոտ	վաշ	գի:	գի:լա
Մեր	թոթ	փիր	կալ
Կաթ	սըտ	շիր	շիր
Կապերտ (գունավ.)	թիլիմ	շէշիմ	շէշիմ
Կապերտ (հարկ.)	աստոր	փալաս	ջուլ
Կով	մանկա	մանկա	ճելէաթ
Կրակ	ատր	աար	ազըր
Հագնել	բրա-թէրդօ	սէր-խօ-կըրն	լը-խօ-կըրն
Հարս	վէյվէ	բուք	բուք
Հաց	նօն	նան	նան
Հոտ (ռչխարի)	հավդէ, սուրի	կարի	կէարի
Զի	օստոր	հէասպ	հասպ
Զմեռ	լմըստօ	զրոստան	զվըստան
Ծամփա	ռա՛	ռէ	ռէ
Զրագ	լըլա	ճրրա	ճրրա, չըրա
Մածուն	մաստ	մաստ	խատըղ
Մաղ	փրաժէն, բէզընգ	բէզընգ	բէժընկ
Մարդ	մարդէմ	մէրի	մերըկ
Յուղ	ռօն	ռուն	ռուն
Նայել	նիյան	նհեռըն	նհեռըն
Նոր	նով	նէվ	թէզէ
Շուն	փրէն	զրաս	կրաս
Ուորել (թել)	թաղի	պաաղի	պատան
Ոսկոր	օստա	հէաստէ	հաստու
Չորթան	թեռինէ	թօրախ	չորտան
Պանիր	փէնիր	փէնտիր	պէանէր
Պատմել	խըսէ-թէղըն	խըսէ-թըրն	խըսէ-կըրըն
Ջուր	ար, աուվ	ա՞վ	ա՞վէ
Սառը	սա՞ար	սօար	սար
Սև	սյավ	ռէաշ	ռաշ
Սպիտակ	սըպի	սըպի	գյաուր, սըպի
Վագել	վազտան	ռէավըն	ռէավ
Տանել	բէրդօն	բըրն	բըրն
Տասը	տաս	տա՛լ	դա՛
Տուն	շէմ	խոանի	մալ
Ունենալ	հէաստան	հէաթուն	հարուն
Փայտ	թօլի	տար	տար
Փոթը	խջրթ	ճուճըկ	ճուճըկ
Քույր	վայէ	խոյէ	խուճկէ*

Հայկական վանքերը և հայ գրչության օջախները.— Դերսիմի տարածքի վրա փռված էին հարյուրից ավելի հայկական եկեղեցիների ու վանքերի ավերակներ: Այդ վանքերից մի քանիսը եղել են գրչության օջախներ. այնտեղ գրված բազմաթիվ ձեռագրերից մեզ հասել են մի քանիսը: Ստորև տալիս ենք այդ վանքերի անունները՝ նրանցում գրված ձեռագրերի ցուցակով:

1. Երկան Ընկուզիկ կամ Երկան Կուզիկի Ս. Կարապետ վանքը, Ս. Հարություն տաճարով, որը, ըստ Լ. Լյուլեճյանի, կառուցվել է հայոց ՆՁԴ (975) թ.: Այնտեղ գրվել են.

ա. «Յայսմաուրբ», գրել է Մինաս գրիչը հայոց ՊՁԴ (1435) թ.: Ձեռա-

* Դերսիմի բարբառը ստուգել ենք բնիկ դերսիմցիներ, քրդագետներ Նշան Տերտեյանի և Մարգարիտ Ղարիբյանի հետ: Կուրմանջին ստուգել է պրոֆ. Հաջիե Ջնդին:

դիրը վանքից ստացել է Աբրահամ եպիսկոպոսը հայոց ՊՂԴ (1445) թ. և տա-
րել Երուսաղեմ, որտեղ գտնվում է այժմ⁹:

բ. «Աւետարան». գրել է Գրիգոր Կուզեցին հայոց ՊԶԱ (1432) թ.: Այս
ձեռագիրը ևս գտնվում է Երուսաղեմում:

գ. «Աւետարան». գրել է Դավիթ գրիչը, որը երկանդնկուզեցի Սահակ քա-
հանայի որդին է եղել, ինչպես նշվում է Մատթեոսի ավետարանի վերջում.

(«Աւարտեցաւ սա յամսենի

Ի քսան և ինն Յունիսի,

.

.

Արդ ես Դավիթս, որ գրեցի

Ձաւետարանս Տեառն Յիսուսի,

Զի կորուստի զփառս հայրենի,

Բայց գրեցաւ սա յանապատի,

Որ Ընկուզեաց անուն կոչի:

.

Ի թիս Հայոց Մեծացն ՊԶԳ»):

Այս ավետարանը պահվում է Սաշտոցի անվան Մատենադարանում:

դ. «Պատմութիւն Յովասափու և Բարադամու Առաքելի Բաղիշեցու».

(«Ի թականիս Հայոց ութ հարիւր էր,

Ութսուն և երեք ի նոյն յարաբարդեալ էր (1434):

.

Ես՝ Առաքել նուստ ոգի,

Մեղաւք լցեալ Բաղիշեցի...»):

ե. «Ներբողեան Առաքել Վարդապետի». («Յօրինեցաւ ձառս ի թականիս
Հայոց ՊԶԴ (1435) ի նորաշէն յանապատիս Երկայն-Ընկուզեաց... ի գաւառն
Յաղմընայ... շինողի ձառի Առաքել վարդապետի»): «Ի նորաշէն յանապատի»
բառերը ապացուցում են վանքի վերակառուցումն Առաքել Բաղիշեցու ջանքե-
րով, հավանաբար, 1430-ական թթ.¹⁰:

զ. «Աւետարան» («Ես Յովհաննէս եպիսկոպոս... գրեցի... լաւ և յընտիր
աւրինակէ. գրեցաւ ի թվին Ռ եւ Ս (1601)... Ի վանքն Երկան-Ընկուզեցի»)¹¹:

2. Կարմիր վանք կամ Կարմրակ Ս. Նշան, Դիաբի զավթած Ագարակ
գյուղին կից, հռչակավոր է եղել իր ուսյալ եկեղեցականներով. («Խումբ առեալ
դասի քահանայից, սարկաւագաց, դպրաց և կղերականաց մատուցանէին
բուրումն անուշահոտ խնկից և կինամոնաց»)¹²: Այնտեղ գրվել են.

ա. «Մաշտոց», գրված հայոց ՊԶԲ (1433) թ., վանքի մեզ հասած ձե-
ռագրերից ամենահինն է, գրել է Գրիգոր գրիչը: Պահվում է Մաշտոցի անվան
Մատենադարանում¹³:

⁹ Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կաղմեց Լ. Ս. Խաչիկյան, մասն Ա, 1955, էջ 449:

¹⁰ Նույն տեղում, էջ 426, 439, 442, 453: «Հանդես ամսօրյա», 1905, էջ 210:

¹¹ Գ. Ս ր վ ա ն ձ ա տ յ ա ն ց, Թորոս Աղբար, հատ. Բ, Կ. Պոլիս, 1885, էջ 359—372:

¹² Տ ր յ ա տ ե պ ի ս Կ. Պ ա լ յ ա ն, Յուդակ վանորեից, տե՛ս «Լույս» շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 3—16 հունիսի, 1906, էջ 569:

¹³ «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Ա, էջ 448:

բ. «Գանձարան», գրված Մկրտիչ գրիչի ձեռքով: Գիրքը եղել է Կարնո Լկեղեցում («Արդ գրեցաւ սա ի նահանգիս Փոխիգիոյ, ի գաւառս Երապօլեաց, որ այժմ մականուամբ կոչի Չմշկածագ, ի համանուանադրութիւն Չմշկիկ Ծովհաննէս թագաւորի: Արդ գրեցաւ սուրբ տառս ի թուականութեանս մերում ՊԶԵ (1436) ձեռամբ... անարհեստ Մկրտչի սուտանուն կրօնաւորի»)¹⁴:

գ. «Մաշտոց ձեռնադրութեան, որ կոչի երիցատետր», «գրեալ ի Չմշկածագ, ի վանքն Կարմիր յամի ՊՂԷ» (1448 թ.): Գ. Վ. Սրվանձտյանցը գտել է Արղանայի «Բարձրահայաց Ս. Աստուածածին» վանքի (Սասունցի-Դավիթ Էպոսի միջի «Մարութայ բանցըր սուրբ Աստուածածին վանք») մագաղաթյա 200 հին ձեռագրերի մեջ, երբ այցելել է այնտեղ 1878 թ., որպես կառավարութեան և Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի կողմից ուղարկված ներկայացուցիչ՝ հայկական գավառներում հայերի և նրանց ղարոյ-եկեղեցիների հաշվառում կատարելու համար:

դ. «Շարական». գրողն է Վարդանիկ կրոնավորը («Արդ գրեցաւ շարականաց, որ կոչի ԽԼԿՅԻ... ձեռամբ Վարդանիկ... կրանաւորի ի յանապատս Կարմիր Վանքի ի թուականիս Հայոց ՌԶԴ» (1625 թ.):

ե. «Աւետարան...» («գրեցաւ Ս. Աւետարանս ի թուա... Հայոց ՌԶԼԳ (1684) ձեռամբ... Արսեն արեղիս... ի Չմշկածագ ի Կարմիր Վանք»):

Այս վերջին երկու ձեռագրերն էլ եղել են Չմշկածագի եկեղեցում:

զ. «Աւետարան», գրողն է Վարդան գրիչ հայոց ՌԶԲ (1623) թ. («...Ձեռամբ արեղայի Վարդանի, որ բարեաց խիստ եմ հեռի...»)¹⁵:

է. «Շարական», նկարազարդված, մագաղաթյա, գրել է Գասպար գրիչը¹⁶:

ը. «Աւետարան» («Գրեցաւ ի Չմշկածագ, ի վանքն Կարմիր յամի ՊԶԷ» 1448)¹⁷:

թ. «Աւետարան», գրչագրված Չմշկածագի Ս. Աստուածածին եկեղեցում. եղել է Դենտիլի եկեղեցում: Գրիչն անհայտ է¹⁸:

ժ. «Աւետարան», մի ավետարան ևս գրված Չմշկածագի Ս. Աստվածածին եկեղեցում («Եւ այտ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի թականութեան ազգին Հայկայ ԶԻԳ (1474), զոգ ձեռամբ անիմաստ ազգի եւ եղկելիս քոյ Մկրտիչ Երիցոյս խոտան եւ վատթար գրչի... եւ արդ գրեցաւ ի քաղաքս Չմշկածագ ի դուռն Սուրբ Աստուածածնիս...»):

Հայտնի է, որ այս (25,5×17,5 սմ ծավալով) մանրանկարներով գիրքը գտնվում է Գերմանիայի Թյուրինգեն քաղաքի համալսարանի գրադարանում, հայերեն ձեռագրերի 107 համարի տակ:

Յ. Խարտիշարա Ս. Կարապետ վանք: Այս վանքում ևս գրվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնցից մեկ էն հասել:

ա. «Մաշտոց», գտնվում է Վենետիկում, գրված է 1434 թ. («գրեալ

¹⁴ Տ. Պ ա լ յ ա ն, նշվ. աշխ., էջ 569:

¹⁵ Գ. Սրվանձտյանց, նշվ. աշխ.:

¹⁶ Այս «Շարական» մեր ընտանիքի սեփականությունն էր, գնել էր իմ պապի պապ տել: Գասպարը, որպես իր եղբորորդու գրած: Տառանշաններից հիշում եմ ՌԶԿ. ուրձմն գրվել է մոտ 1710 թ.:

¹⁷ Տ. Պ ա լ յ ա ն, նշվ. աշխ.:

¹⁸ Նույն տեղում, էջ 861—862:

ի վանքս հարտիշարայ, ընդ հովանեաւ սուրբ Կարապետին և սուրբ Աստուածածնին, ձեռամբ Ստեփան Կրօնաւորի»)¹⁹:

բ. «Մայր Մաշտոց» («գրեալ Ս. Անապատն հարտիշարայ, Զմշկածագ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Կարապետին և Ս. Սարգսի զօրավարին ի թուա. Հայոց Ջեզ, (1497) Աւգոստոս ամսոյ ԻԲ (22) առ ոտս Ստեփանոս քաջ ռաբունապետին և իւր եղբայրորդոյն Յովհ. Հայրապետին... յիշեցեք... զԿիրակոս կրանաւոր փծուն գրիչս»):

Այս Մաշտոցը եղել է Կեմախի «Ս. Թադէոս վանք կամ Աւագ վանք և Լուսավորիչի անապատ» կոչված վանքում. գրի է առել Գ. Սրվանձտյանցը, 1879 թ.²⁰:

գ. «Աւետարան» («...գրեցաւ սուրբ Աւետարանս և թուա. Հայոց ի ՋՂ ամին (1541), ձեռամբ... Յովսեփ եպիսկոպոսի ի նահանգիս Զմշկածագի ի վանքս հարտիշարայ, ընդ հովանեաւ սուրբ Կարապետի և սրբոյն Սարգսի զօրավարին ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Տէր Կարապետ եպիսկոպոսին, որը փոխեցաւ առ Քրիստոս և ի հայրապետութեան Վաղարշապատոյ սուրբ էջմիածնայ Տեառն Գրիգորիսի, և միւս հայրապետութեան Սիսոյ Տէր Սիմէոնի...»):

Այս ավետարանը եղել է հարտիշարի սահմանակից Հաղթուկ գյուղի եկեղեցում²¹:

4. Հալվորի և Պառվագրակի վանքեր: Հալվորի վանքը միակ կանգուն վանքն էր 1915 թ.: Վանքի մեծ գերեզմանոցում եղած բալմաթիվ տապանաքարերի մեջ ամենաուշագրավն է եղել առյուծակերպ, մարմարյա բարձր տապանաքարը²²:

Պառվագրակի վանքից մեզ հասել են երեք ձեռագիր.

ա. «Գանձարան և տաղարան» («...Գրեցաւ տաղերս ձեռամբ անիմաստ գրչի սուտանուն Աստուածատուր դպրի, ընդ հովանեաւ սուրբ Կարապետիս, ի յանապատս, որ կոչի «Պառվագրակ, ի թուա. ՊՀ» (1421): Եղել է Սեբաստիայի Ս. Նշան վանքի սեփականութունը:

բ. «Հարանց վարք». գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում: Ստորև բերում ենք հիշատակարանը՝ խիստ կրճատված.

«...Յազբանագեան մեծ տումարի,
Հայոց Մեծացս թուականի,
Երկեակ քառիցս հարիւրի,
Վեց տասանց և ութ աւելի, 1419,
Աւարտ եղել յայսմ տառի,
Որ Հարանց վարք սա յորջորջեալ,
Զի զվարս սուրբ հարցն պատմեալ: Ստացող՝ Յովանէս:
Ես Յովանէս սիրող բանի,
Որ եմ ի վանս Պառվագրակի,

¹⁹ «Ժն դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Ա, էջ 447:

²⁰ Գ. Սրվանձտյանց, նշվ. աշխ.:

²¹ Նույն տեղում, էջ 364—370:

²² Հ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 49:

Ի դուռն սուրբ Կարապետի,
Ըզդիրքս, որ Հարանց վարք կոչի,
Ինձ յիշատակ զսա էզի.....

Զկաղմող սորայ՝ զՍարգիս սուտանուն արեղայ, աղաչեմ յիշեալ յաղօլիս ձեր»²³:

գ. «Աւետարան», մագաղաթյա, եղել է Գեոկթեփե գյուղի եկեղեցում («...Գրեալ է ի թւ. ԶԳ (1454) ի վանս Պառազրակ ընդ հովանեաւ սուրբ Նշանիս և սուրբ Կարապետիս և սուրբ Սարգսի ղօրաւարին... ձեռամբ Կարապետ հայրապետին... յիշեցեք զյամարէն միաբանութիւնն սուրբ Կարապետին զհնգետասան կրանաւորին, զերծս ղտղայս, ղսարկաւագունք եւ գործաւորքս Անապատիս, Հալւորի վանուց...»)²⁴:

5. Կողուց Ս. Լուսաւորիչ վանք: Հիմնահատակ կործանված և տեղն անհայտ այս վանքը Տրդատ եպիսկ. Պալյանի հավաստմամբ եղել է Զմշկածագում և, ըստ հիշատակարանների, հավանաբար Կարմիր վանքի մոտերքը: Այս վանքից մեղ հասել է «Ճառքնտիր Տօնական» և մի «Աւետարան», որոնց հիշատակարաններից բերում ենք քաղվածքներ.

«...Որ եղ կարողութիւն հասանել ի յետին գիծ Ոսկեփոր Տանականիս, որ կոչի Կողուց վանք, ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին եւ սուրբ Նշանացն Քրիստոսի: Յառաջնորդութեան Յակոբայ րաբունապետին: Արդ գրեցաւ սա ձեռամբ Կարապետի և անպիտան գրչի յամի Պէշ (1428) թուականի տօմարի»:

«... Եւ ես յոգնամեղս եւ փցունս ի գրչաց Վարդան արեղայ, կատարեցի ըստ իմում կարի... շնորհօք եւ ողորմութեամբն Աստուծոյ ի թուականիս ԶԺ (1461) ամի ամսեանն Մահեկի»: «Արդ եղև սկիզբն սորայ, ի վանս, որ կոչի Կողուց, ընդ հովանեաւ սուրբ Լուսավորչին, եւ Կարմրուկն սուրբ Նշանի, որոյ ինամօքն աւարտեցի...»²⁵:

6. Գուրգանա կամ Գուրգանաց վանք: Կառուցված է եղել Բերիքղաղ լեռան կողին, Զմշկածագից հյուսիս, բնիկ քրդերը այն կոչում էին «Գուրգանա վանք» կամ «Զիարաթէ Գուրգանէ»: Վանքի շրջակա գյուղերն են՝ Խաչելի. Բղուանք, Պետոյին Մըրդէն և Թլակ: Ըստ ավանդության այս գյուղերի քրդացած հայ բնակիչները հետևում էին շիի կամ ալևի աղանդին և պատկանում էին Գարիկի կամ Գարիկ-ուշաղի (Գարիկի որդիք) աշիրին, ոչ մի իսլամական աղոթք չգիտեին, ոչ էլ աղոթատեղի ունեին: Նրանց պաշտամունքի առարկան վանքի մնացորդ մատուռն է եղել՝ կառուցված Հալվորի վանքի ներքին տաճարի ձևով:

Մատուռի մուտքի անդուռ կամարի վերևում լայն քարի վրա մեծ տառերով, խորաքանդակ, զրված է եղել. «Կառուցուա զեկեղեցիս արդեամբ Աւետիք Աբեղայի, որ եկեալ ի Զմշկածագէ ի Կարմիր վանուց, թուին Հայոց ՌՃԴ» (1685): Այս արեղան պետք է լինի Ավետիք Եվդոկացին (1657—1711), որը արեղա է ձեռնադրվել 1681-ին և կարգվել Սեպուհ լեռան Ս. Հակոբի վանքի

23 ՔԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ա, էջ 231 և 267:

24 Գ. Սրվանձտյանց, նշվ. աշխ.:

25 Տ. Պալյան, նշվ. աշխ., էջ 569:

առաջնորդ²⁶։ Վանքին մոտիկ է եղել գիրեղմանոցը, մասամբ անընթեռնելի արձանագրությամբ տապանաբարերով։

7. Սուրբ էհան եկեղեցի կամ վանք։ Չմշկածագից ոչ հեռու Սուրբիան գյուղի մոտ գտնվող ավերակն էր։ Եկեղեցու կառուցվածքը, ըստ Ջ. Թեյլլերի, Սա-Գետիկի եկեղեցու նման է եղել և կանգուն է մնացել մինչև 1866 թ., իսկ Սա-Գետիկը՝ մինչև 1915 թ.։ Ըստ գյուղի բնակիչների և 1915 թ. այնտեղի տեր Սուլեյման աղայի հովանավորությամբ աղատված հայերի պատմածի, վանքի ավերակը («Սուրբ Հովհաննես» անվամբ) բրդերի մոտ պաշտամունքի վայր էր. այնտեղ ուխտ են գնալիս եղել նաև հայերը։

8. Քյուրդյանն իր «Երիզա» գրքում (էջ 281) գրում է, որ 1314 թ. ոման Կարապետ գրչի կողմից մի ավետարան է նվիրվել այս եկեղեցի-վանքին։ Հետեւաբար այն պետք է կառուցված լինի 1300-ական թթ. կամ ավելի վաղ։

Բացի այս Սուրբ էհանից եղել է մի այլ Սուրբ էհան՝ Չմշկածագի հյուսիսային սահմանում։ «...Յարեւելից կողմն Ագրակն է և Պաղանն, յարեւմտից դէն՝ Սուրբ էհանն...»²⁷։

Չմշկածագից հյուսիս-արեւմուտք բնկած Ս. Թորոս (թրք. Սիփթորոս) գյուղախմբի մեջ կար Վանք գյուղը, որն ուներ 5 տնտ. իսլամացած հայ բնակչություն։ Այստեղ կալին 2 վանքերի ավերակներ, ուր ուխտագնացություն էր լինում։ XVIII դարի II կեսին իսլամացված Ռապատ հայկական գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում գրվել է մի ավետարան, բայց դրոշն իր անունը չի հիշատակել («...գրեցաւ սուրբ Աւետարան ի թուա. Հայոց Ռեթ (1600) ամի, դիւղաբաղաքն Ռապայ. ի դուռն սուրբ Աստուածածնի և սուրբ Վասիլ իշխանին...»)։ Այս ավետարանը եղել է Փերիի եկեղեցում²⁸։

Վերահիշյալներից բացի Չմշկածագի շրջակայքում կային հետեւյալ ավերակ վանքերը. 1. Ս. Զորավոր, Օձգեղի մոտ. 2. Նրեք մանկունք, Պռաստիկի մոտ. 3. Վասիլկա վանք, որ նաև Վասակվան գյուղի եկեղեցին էր. 4. Խարավանք թուրքական գյուղի վանքը. 5. Կարմիր գյուղի Քառսուն Մանկանց վանք. 6. Կոշոյի թուրքական գյուղի վանքը. 7. Ս. Սարգիս և Վալասլայ վանքերը Մորշխան գյուղում. 8. Քառսուն-Մանկանց վանքը Պրեխի գյուղում. 9. Ս. Կիրակոս վանքը Օձգեղում. 10. Ապշորայ վանքը Բաղաբուն գյուղում. 11. Աստվածմերդի և Սունկ-Սունկ վանքերը Խարասար գյուղում. 12. Ասորեմայր անապատը Չմշկածագ քաղաքի Սաղվին թաղում. 13. Բեմկենուտի վանքը։

Վանքեր եղել են նաև Եփրատի ձախափնյա հարթությունում, Արաբկիրի և Չմշկածագի միջև։ Արշակ Այսոյաճյանն այս մասին գրում է. «Անչրդիի վրայեն Շնկախ, Եփրատն անցնել ևս Զմշկածագի ճամբուն վրա հանդիպեցա քանի մը լքյալ վանքերու և եկեղեցիներու, որոնց պատերուն ասորերեն արձանագրություններ կային»²⁹։

Դերսիմի գրեթե կենտրոնական մասում՝ Զամբելում (Զմբելում), եղել են նաև բավական թվով վանքեր, որոնց մի մասի ավերակների քարերը մաք-

26 Մ. Պոտուրյան, Հայ հանրագիտակ, հատ. Ա, էջ 328։

27 Ե. Լալայան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, պր. 1, Թիֆլիս, 1915, էջ 535։

28 Դ. Սրվաճատյանց, նշվ. աշխ.։

29 Արշակ Այսոյաճյան, Պատմություն Մալաթիո, Բելրութ, 1961, էջ 168։

րելով, այդ տարածությունը արտի են վերածել: Սակայն զմբեկացիներ Ավետիս Օհանյանի և Թորոս Տոնապետյանի պատմածով, որը գրի է առել Հովհ. Աճեմյանը, դեռ կիսավեր վիճակում են եղել Զամոյի վանքը, գյուղի դիվան կողք-կողքի կառուցված երկու եկեղեցիները, Տանձիաթանուդերևի լանջերին դեմ-դիմաց կառուցված երկու եկեղեցիները, «Քաղբին ձամբուն», Խոզատի վրայի եկեղեցին, Վերին և Ներքին Սաղմնա եկեղեցիները³⁰: Այստեղ մի բարձրության վրա եղել է Զմբեխի դամբարանը: «...Զմբեխի կամ Զամբեխի դամբարանը կը կազմեն սրբատաշ մարմարե բարձրադիր և քով քովի դրված երեք գերեզմանաքարերը, որոնց մեջտեղինը ավելի խոշոր ու բարձր էր, քան երկու կողերունը: Դամբարանին կամարներն ու սյուները ընկած էին ու պատերը փլած: Մեջտեղի տապանաքարին վրա գրված էր. «Յիշատակ տաճարս սբ. Մարգէ եպիսկ. ծնաւ... թվկ. ԶԾԸ (1609)»³¹: Նշանավոր է եղել հատկապես Հոռոմի կամ Հոռոմոսի վանքը («Գալուստ Ծերունի, գրիչ Հոռոմոսի վանքին 1494 թ.»): Նույն 1494 թ. վանքի առաջնորդն է եղել Արիստակես եպիսկոպոսը³²:

Էռշմար քրդացած հայկական գյուղում կային երեք եկեղեցիների ավերակներ և խաչքարեր, որ բնակիչները պահպանում էին: Մոխնտիում (ըստ Գ. Հալաջյանի՝ Մոգոտուն) եղել են ութ եկեղեցիների ավերակներ, որոնք ծառայել են որպես ուխտատեղի³³:

Ինն կոշվող գյուղում եղել են 9 եկեղեցիների ավերակներ: Զ. Թեյլորի նկարագրությամբ գյուղը կառուցված էր Աղսու (Շերմակ ջուր) ձորի մեջ՝ «շրջապատված մոտ երկու մղոն երկարությամբ և մեկ մղոն լայնությամբ կրաքարային բարձր, ուղղահայաց ապառաժներով: Գյուղի առջևից դեպի վտակն է ձգվել մի մշակելի հարթություն՝ խոշոր ընկուղենիներով: Բնակիչները խզլբաշներ են եղել, որոնք, ինչպես Դերսիմի այլ վայրերից, այնպես էլ այստեղից դուրս են վտարել հայերին: Հին եկեղեցիների մոտակա գերեզմանոցները լի են տապանաքարերով: Մի շարք գլխաքարեր կրում են հայ եկեղեցու պաշտամունքային զանազան պարագաների պատկերաքանդակներ և այլ պարզ քարե քանդակներ»³⁴:

Գյուղեկրի ուղղաձիգ ժայռի վրա կան իրար մոտիկ փորված մի քանի խոռոչներ, որոնցից մեջտեղինը կոշվելիս է եղել «Խշխանաց Թախտ», իսկ թուրքերը անվանել են «գալի» (բերդ): Այս ժայռի ստորոտի փորվածքը հայերի ուխտատեղին է եղել «Քառսուն մանուկ» անունով, ուր քրդերն էլ էին ուխտի դնում:

Մինչև XIX դարի 40-ական թթ. գյուղի բնակիչները հայեր են եղել: Նույն թվականներին Խարքալի աշիրի (եկվոր) Ալի աղան, որ արդեն տիրած է լինում Սաղմանին, մեծ բաղմոթյամբ պաշարում է գյուղը, հայերին առաջարկելով կամ մահմեդականություն ընդունել և մնալ իրենց ունեցվածքի տեր, կամ հեռանալ: Գյուղացիների մեծ մասը հեռանում է:

1915 թ. Իննում ապրում էին 6 տուն քուրդ և 8 տուն թուրք:

30 Հովհ. Աճեմյան, Տերսիմ. (անտիպ):

31 Լ. Կ. Լյուկեճյան, Տերսիմ, «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1943, N 21:

32 Մ. Պոտոույան, Հայ հանրագիտակ. էջ 276:

33 Գ. Հալաջյան, նշվ. աշխ.:

34 J. G. Taylor, նշվ. աշխ., էջ 291:

Քրդերի մեջ 1915 թ. առևտրով և արհեստով զբաղվող հայերը, թուրքերի կողմից ձերբակալվելով, Իննի սպառաժներից ցած են նետվել և սպանվել³⁵։

Հնուքյուններ.— 1. Ձգտիկ (հավանաբար հնում կոչվել է Ծակտիք)։ Չմշկածագ քաղաքի դիմաց, Թաղարա ջուր գետակի արևմտյան ափին, վիթխարի պարսպի նման 200—250 մ ուղղաձիգ բարձրացող և գետակին զուգահեռ 3—3,5 կմ երկարող «Մուռնայուն Քարը» կոչված ժայռասարի կրճերն, գետակի հունից մոտ 100—120 մ բարձրությամբ, եռաշարք, 20-ից ավելի վիմափոր սենյակներ, շարքերն իրարից 2-ական մ բարձրությամբ։ Մուտքերը 1,2×0,6 մ էին, իսկ ներսի բարձրությունը՝ մոտ 2 մ։ Մյուսնց արտաքին կամ հակառակից պատերի վրա կային դրսից՝ 20—25 սմ, իսկ ներսից՝ 50—60 սմ լայնությամբ և 65—70 սմ բարձրությամբ լուսամուտներ, որոնք ծառայել են նաև որպես գիտակետ։ Առաջին կամ ստորին շարքում կար մի ընդարձակ քարայր, որտեղ կարող էր տեղավորվել շուրջ 2 հազար մարդ։ Քարայրը սկզբի մասում մոտ 3 մ բարձրություն ուներ և 3—4 մ լայնություն, խորքում աստիճանաբար ցածրանում ու նեղանում էր, իսկ ներսից օդի ուժեղ հոսանք էր գալիս։ Ասում էին, որ այդ քարայրից ստորերկրյա ճանապարհ կա, որը տանում է գեպի նրա հյուսիսային բլրալանջին գտնվող բացվածքը։ Նրկորդ շարքում կային նաև երկարությամբ մեջ-միջի փորված սենյակներ։

2. Ճգնավորի քարը։ Այս ժայռը գտնվում էր Թաղարա ջուր գետակի ձախ ափին, Ձգտիքի հանգիստակաց կողմը, 150—200 մ դեպի հարավ-արևելք ընկած բարձրության վրա. ուներ հատած բուրգի ձև, պրեթե բառանիստ, բութ անկյուններով և 7—8 մ բարձրությամբ։ Հատված դաղաթի կենտրոնից բավական լայն ու մարդահասակ խորությամբ խոռոչ էր բացվում ժայռի մեջ և այդ խոռոչի կենտրոնից ավելի նեղ մի անցք իջնում էր ներքև՝ ժայռի հատակը։ Ըստ ավանդության դա Ձգտիքի հետ ստորգետնյա հաղորդակցության անցք է եղել։ Իսկ անունը Ճգնավորի քար է դրվել այն պատճառով, որ իբրև այդ խոռոչի մեջ ճգնել է ոմն ջերմեռանդ հավատացյալ։

3. Խարտիշարի հնությունները։ Այս պուղի վանքին կից կային բազմաթիվ հնություններ, գերեզմանոցներ։ Վանքի մատուռը, պահպանվելով Մշկաղայի կողմից, կանգուն էր մինչև 1930-ական թթ.։

ա. Խոյին քարը վանքից Խարաղաշ տանող ճանապարհի վրայի լայն ցածրադիր ժայռն է, որի դաղաթին բանդակված էր խոյի արձանը՝ բնական մեծությամբ։

բ. Մարմար քարը վանքի արևմտյան կողմում և նրանից բավական հեռավորության վրա գտնվող սպիտակ ժայռն է, որի վրա բարձրանում էր բնական մեծությամբ և հին հայկական կանացի տարազով, գեպի վանքը նայող մարմարյա արձանը։ Նրա կրճի վրայի 2 տող արձանադրությունն անընթեռնելի էր դարձել։

4. Ակնիկի հնությունները։ Խարտիշարի հյուսիս-արևմտյան սահմանում. Չմշկածագից 7—8 կմ հեռավորության վրա գտնվող Ակնիկ գյուղի (նախկինում հայաբնակ և հետո՝ քրդաբնակ, 12 տուն) հյուսիս-արևելյան կողմում կային մի քանի քարայրներ, որոնք փորված էին ժայռի մեջ, իսկ հարավ-արևելյան կողմում, «Փնթակ քար» կոչված հսկա, ղլանաձև երեք սյուններն էին,

³⁵ Լ. Կ. Լյուլեճյան, Տերսիմ, «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1943, № 17։ Հովհ. Աճեմյան, Տերսիմ (անտիպ), էջ 31։

դեղնակարմրավուն, չեչոտ բարից: Դասավորված էին եռանկյունաձև, իրարից անհավասար հեռավորության վրա: Սլունների գագաթի տրամագիծը 1 մ ավելի կլիներ, իսկ ներքեի մասը՝ վերինի կրկնապատիկն էր: Երկուսի բարձրությունը կլիներ 3 մ, իսկ մեջտեղինը ավելի բարձր էր: «Այս քարե սյուները, որոնք Հայաստանի մեջ շատ են, ըստ ուսումնասիրությունների, նաիրյան շրջանի սահմանաքարեր են», — գրում է Ա. Ֆեթվաճյանը³⁶:

5. Հաղթուկ գյուղի «Քարնույ քարը»: Եռահարկ քարայր է, գտնվում էր գյուղի հարավային կողմում, Չմշկածագից 10—12 կմ հեռավորության վրա: Այն փորված էր հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք 8—9 հարյուր մետր երկարուղ և երկու կողմից աստիճանաբար ցածրացող մի վիթխարի սալաստ ներկայացնող բլրի կենտրոնական մասի հյուսիսային լանջի հսկա ժայռի մեջ: Նրա մուտքը գրեթե ժայռի կեսից էր և մտնելու համար պետք էր մագլցել բեկյալ գծի նման բարձրացող նեղլիկ շավիղով³⁷:

6. Հավշաքար (ըստ ոմանց՝ Հաշվաքար) գյուղի հնությունը: Սա հնագույն հայաբնակ գյուղերից էր, որին քրդերը տիրել են 1900-ական թթ.: Այն գտնվում էր Չմշկածագից 20 կմ հեռավորության վրա և վարչականորեն ենթարկվում էր հողատիր:

Այս գյուղով 1866 թ. սեպտեմբերի 15-ին անցել է Զ. Թեյլըրը, որը գրում է. «Փոքր գյուղ էր, զուտ հայաբնակ: Այն հաստատված էր տափարակի վրա: Գյուղի ծայրին, քարուտ բլրի վրա բարձրանում էր վիթխարի ապառաժը, իսկ ապառաժի գագաթին թառել էր մի ավերակի մնացորդ: Ժայռի գագաթից դուրս են ցցված ասեղանման սուր և սղոցակերպ մանր աշտարակներ»³⁸:

7. Ամութխայի հնությունը: Կենտրոնական Դերսիմի մեծ գյուղերից էր, 35—40 տնտ. և պատկանում էր եռջանի աշիրի պետ Սեիդ Իբրահիմին (Իդարա), որը 1915 թ. Մեծ եղեռնի ժամանակ մեծ օգնություն է ցույց տվել հայերին: Գյուղն ունեցել է գաղտնի քարայր, Օվաջուղի ճանապարհի վրա, մի ձորի մեջ: Այդ գյուղում ապաստանած և քարայրն այցելած Եղիազար Պապիկյանն իր «Տերսիմի հուշեր» անտիպ աշխատության մեջ նկարագրում է, որ մոմի լուսավորությամբ երկար, ննդ միջանցքով քայլելով, հասնում ես կամարակապ մեծ սրահ, ուր հանդիպում ես մի շաքթ փայտյա արձանների:

8. Ղզըլ-ղալա գյուղի ուրարտական արձանագրությունը: Գտնվում է Մեծկերտից (Մաղկերտ) մոտ 15 կմ դեպի արևելք, վարչականորեն ենթարկվում էր Մեծկերտին: Այն կառուցված էր համանուն բերդի ստորոտում: Գյուղի եկեղեցու սլատի մեջ պահպանված է եղել արձանագրությամբ մի քար³⁹:

Հնությունները սրանով չեն սահմանափակվում: Ա. Ալպոյաճյանը իրավացիորեն գրում է. «Ամեն անոնք, որոնք ոտք կը դնեն Տերսիմ, պիտի տեսնեն բաղամթիվ փլատակներ, եկեղեցիներ, վանքեր, մատուռներ, գերեզմանոցներ, դամբաններ, խաչքարեր, ճգնարաններ և ուխտատեղիներ: Այս բոլոր կրոնական վայրերը ունին իրենց ավանդավեյները, որոնք կը հարգվին ու կը պաշտպանվին քրդերեն: Երկայն գյուղի հուշակավոր, հրաշակերտ կես-ավերած մեկ

³⁶ «Գեղունի», Վննետիկ, 1947, էջ 33—34:

³⁷ Հ. Հ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 44, 97 և 103: Հոսվ. Սուրբիասյան, «Հաղթուկ» գյուղը (անտիպ):

³⁸ J. G. Taylor, նշվ. աշխ., էջ 320—321:

³⁹ Արձանագրությունը հրատարակված է տե՛ս Դ. Ա. Мелникшвили, Урартские клинообразные надписи, М., 1960, տեքստ 42:

վանքին Թ. դարեն մնացած գեղեցկությունը Անին հաղիվ ունի: Այս վանքին հետ կը միանա Հալվորի Ս. Կարապետը, Զեմպեի դամբարանը, Մագի կամ Իննի 9 եկեղեցիները, Բել վանքը, Մեծ վանքը, Ճգնավորը, Գառսուն Մանուկը, Ս. Սանդուխտը, Ս. Հովհաննեսը ևլն»⁴⁰:

Այն ամենը, ինչ սեղմ կերպով նկարագրեցինք այստեղ, այժմ դարձել է հուշ, քանի որ թուրքական կառավարությունը 1937 թ. հիմնահատակ ավերեց հնագույն այդ արժվաբույնը և քաջարի ժողովրդի ղեկավարներին ոչնչացնելուց հետո, մնացածին ցրեց ամբողջ Թուրքիայով մեկ, յուրաքանչյուր գյուղում տեղավորելով 1—2 ընտանիք: Սակայն ըմբոստ դերսիմցին դաշտում ապրել չկարողանալով երկար չհանդուրժեց: Նրանց մի մասը փախստական վերադարձավ իր պապենական երկիրը. անշուշտ, ոչ նախկին զորությունով կամ բաղամարդությամբ:

ДЕРСИМ

(Историко-этнографический очерк)

А. О. ГАСПАРЯН

(Резюме)

В очерке приводятся интересные историко-этнографические сведения об армянском и курдском населении провинции Дерсим. Особенно подробно говорится об исторических памятниках этого района. Помимо литературных материалов автор, уроженец Дерсима, широко использовал свои воспоминания и личные наблюдения.

⁴⁰ «Հայրենիք», Բոստոն, 1931, № 10, էջ 90: